Արձանագրություն N 2
ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/8 ծածկագրով ՀՀ Տավուշի մարզի ք.Դիլիջանի թիվ 5 դպրոցի մարզադահլիճի կառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 04.05.2018 թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Քոչարյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մանուկյան / բացող /
Ռ. Ադամյան / բացող /
Վ. Առաքելյան /գնահատող/
Գ. Գևորգյան /գնահատող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

1. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/8 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտերի բացման մասին

(Ա.Քոչարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2018 թվականի ապրիլի 20-ին ժամը 12:00-ին:

բ) Գնման ընթացակարգի նախահաշվային արժեքը կազմում է 7 000 000 (յոթ միլիոն) ՀՀ դրամ:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Էլ. փոստի հասցե	Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1	<<Վանարխ>> ՍՊԸ	vanarkh@mail.ru	1 800 000	-	1 800 000
2	<<Հազարաշեն>> ՍՊԸ	hazarashen@mail.ru	1 850 000	-	1 850 000
3	<<Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ>> ՍՊԸ	tahggrig.llc@mail.ru	2 082 000	-	2 082 000
4	<<ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ	kvenakhagits@mail.ru	2 270 000	-	2 270 000
5	<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ	taron.virabyan@mail.ru	2 400 000	-	2 400 000
6	<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ	norashendtc@gmail.com	2 450 000	-	2 450 000
7	<<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ	karoshinnaxagic@hotmail.com	2 500 000	-	2 500 000
8	<<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ	gagnaxshin@mail.ru	3 000 000	600 000	3 600 000
9	<<էմ Ջի դիզայն>> ՍՊԸ	mgdesign19@gmail.com	3 260 000	-	3 260 000
10	<<Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան>> հիմնադրամ	mghazaryan@nuaca.am	4 140 000	828 000	4 968 000
11	<<ՀԳՇՆ>> ՍՊԸ	hgsn2017@gmail.com	4 166 667	833 333	5 000 000
12	<<ԱՔԱՐԱ>> ՍՊԸ	akara.ltd@mail.ru	5 900 000	-	5 900 000
13	<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ	poghosova@mail.ru	6 800 000	-	6 800 000

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

դ) 2018 թվականի ապրիլի 20-ի նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովը ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով որոշել է հաջորդ նիստը հրավիրել է 2018 թվականի մայիսի 2-ին ժամը 12:00-ին:

ե) Գնման ընթացակրգի մասնակիցների հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ <<ՀԳՇՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հավելված 2.1-ում նշված չեն մասնակցի իրական շահառուների հայրանունները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջը՝ 2018 թվականի մայիսի 02-ի նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովը որոշեց՝ ծանուցել վերը նշված կազմակերպությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը: Վերջինիս կողմից սահմանված ժակետում շտկվել է արձանագրված անհամապատասխանությունը:

2. Տեղեկություններ ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/8 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Ա.Քոչարյան)

2.1 Ուսումնասիրելով ընթացակարգի մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ հերթականությամբ և հետևյալ կերպ.

Մրցույթում զբաղեցրած տեղը	*Մասնակցի անվանումը*	*Հայտի գնահատականը*
1	<<Վանարխ>> ՍՊԸ	բավարար
2	<<Հազարաշեն>> ՍՊԸ	բավարար
3	<<Թ.Ա.Հ.Գ. ԳՐԻԳ>> ՍՊԸ	բավարար
4	<<ՔՎԷ ՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ	բավարար
5	<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ	բավարար
6	<<Նորաշեն>> ՆՏ ԱԿ	բավարար
7	<<ԿԱՐՈՇԻՆՆԱԽԱԳԻԾ>> ՍՊԸ	բավարար
8	<<ԳԱԳՆԱԽՇԻՆ>> ՍՊԸ	բավարար
9	<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ	բավարար
10	<<Ճարտարապետության և շինա-րարության Հայաստանի ազգային համալսարան>> հիմնադրամ	բավարար
11	<<ՀԳՇՆ>> ՍՊԸ	բավարար
12	<<ԱՔԱՐԱ>> ՍՊԸ	բավարար
13	<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա.Քոչարյան)

3.1 Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝ հանձնաժողովը որոշեց.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած <<Վանարխ>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:
- Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած <<Վանարխ>> ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացնելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

4. ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/8 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա.Քոչարյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից պատասխանները ստանալու օրը, բայց ոչ ուշ, քան 2018 թվականի մայիսի 10-ին ժամը 12:00-ին ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Քոչարյան

Անդամ՝ ---------- Ն.Մանուկյան

---------- Ռ.Ադամյան

---------- Վ.Առաքելյան

---------- Գ.Գևորգյան

Արձանագրությունը կազմեց
Հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան